

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՎԱԽՍՅԱՆ ՔՆՔՈՒՇ ՀՈՎԻԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

**Գիտական ղեկավար՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Վարդան Բաբկենի Բոստանջյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր  
**Արմեն Գեորգիի Սաֆարյան**

տնտեսագիտության թեկնածու  
**Էդգար Վահագնի Աղաբեկյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի օգոստոսի 29-ին ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ԲԿԳԿ թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան փող., 128 շենք

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024թ. հուլիսի 16-ին

014 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տ.գ.դ., պրոֆեսոր



S. U. Մարտիրոսյանին

## ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Յուրաքանչյուր երկրի հարկային համակարգի արդյունավետությունը մեծապես որոշվում է դրանում սահմանված հարկատեսակներով: Որոշ հարկատեսակներ՝ անկախ դրանց հիմնավորվածության աստիճանի, դիտարկման ենթակա չեն, քանի որ դրանցից որոշները պահանջում են հավաքագրման մեծ ծախսեր, իսկ որոշները ցանկալի չէ կիրառել մի շարք տնտեսավարող սուբյեկտների վրա: Այդ առումով հարկային համակարգում հիմնավորված հարկատեսակների սահմանումը և պետական գործառույթների իրականացման համար առավելագույն ծավալով եկամուտների մոբիլիզացումը պետք է ուղեկցվի հարկային քաղաքականության պարզեցմամբ և հարկային վարչարարության կատարելագործմամբ:

Կարևորելով Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգի զարգացմանն ուղղված բարեփոխումներն՝ այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ ներկայումս այդ համակարգում առկա են չլուծված խնդիրներ, որոնք կապված են հարկային քաղաքականության պարզեցմամբ և վարչարարության կատարելագործմամբ: Նշված խնդիրները լուծելու և հանրապետության առջև ծառայած նպատակներն իրականացնելու գործում ակնհայտորեն առանցքային է հարկային վարչարարության դերը: Վերջինիս կատարելագործմամբ է մեծապես պայմանավորված պետական եկամուտների ապահովումը և պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորումը: Միաժամանակ հարկային վարչարարության կատարելագործումն ուղղակիորեն փոխկապակցված է վարվող հարկային քաղաքականության հետ, ինչը պահանջում է այդ ոլորտում իրականացվող բարեփոխումները դիտարկել որպես միասնական գործընթաց: Այլ կերպ ասած՝ առանց հարկային վարչարարության արդյունավետ մեխանիզմների ներդրման և շարունակական կատարելագործման հնարավոր չէ լուծել հարկային քաղաքականության առջև դրված խնդիրները:

ՀՀ-ում հարկային քաղաքականության կատարելագործման և հարկային համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով ատենախոսությունում դրվել և լուծվել են հարցեր, որոնք ուղղված են հարկային օրենսդրության հստակության ապահովման, ՀՀ-ում գործող հարկատեսակների, դրանց հարկման բազաների և դրույքաչափերի վերանայման, ստվերային տնտեսության ծավալների կրճատման, անկանխիկ եղանակով գործարքների իրականացման խթանման, վարձակալության պայմանագրերի պետական գրանցման պարզեցման, հարկային արտոնությունների տրամադրման, հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ընդլայնման, որակյալ և բանիմաց մարդկային ռեսուրսների համալրման և այլ խնդիրների լուծմանը, ինչով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունը, հետազոտության արդիականությունն ու նշանակությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ հարկային համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումների ու առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

❖ ուսումնասիրել հարկերի գործառույթները և հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում, ինչպես նաև հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձը,

❖ բացահայտել ՀՀ հարկային համակարգի ձևավորման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանցից յուրաքանչյուրում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև ՀՀ-ում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի պատճառները,

❖ ուսումնասիրել հանրապետությունում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշները,

❖ գնահատել հարկային վարչարարության կարողությունների գնահատման գործիքները, մշակել հարկային վարչարարության կատարելագործման նոր ուղիներ,

❖ հաշվարկել ՀՀ-ում ԱԱՀ-ի շեմի օպտիմալ մակարդակը և գնահատել վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա,

❖ մշակել վարձակալության պայմանագրերի կնքման և գրանցման գործընթացների պարզեցման նոր ընթացակարգեր:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ հարկային համակարգն է, իսկ առարկան՝ այն կատարելագործման ուղիներն են, որոնք ուղղված են հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանը խոչընդոտող հիմնախնդիրների լուծմանը:

**Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, Հարկային օրենսգիրքը, հարկային հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսգրքերը, օրենքները, իրավական այլ ակտերը, ինչպես նաև հետազոտողների, տնտեսագետների գիտական հրապարակումներն ու աշխատությունները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, Վիճակագրական կոմիտեի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եվրոպական միության և մի շարք այլ կազմակերպությունների կողմից հրապարակված հաշվետվությունները, համառոտագրերը, հետազոտությունները, տեղեկագրերը, տվյալները, ինչպես նաև հեղինակի սեփական վերլուծությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են իրավիճակային ու համակարգային մոտեցումներ, ինչպես նաև գրաֆիկական, համեմատական ու վիճակագրական վերլուծության մեթոդներ:

**Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:** Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը վերաբերում են ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր և կիրառելի ուղիների առաջադրմանը, որոնք ներկայացնում ենք ստորև.

1. Միջազգային պրակտիկայում կիրառվող մեթոդների միջոցով գնահատվել է ՀՀ հարկային համակարգի արդյունավետությունը և մշակվել են առաջարկություններ ՀՀ-ում գործող հարկատեսակների, դրանց հարկման բազաների և շեմերի վերանայման ուղղությամբ:

2. Մշակվել են հարկային արտոնությունների տրամադրման և գնահատման մեթոդաբանական մոտեցումներ, առաջարկվել՝ արտոնությունների հիմնավորվածության աստիճանի գնահատման և մշտադիտարկման մեթոդաբանություն:

3. Հարկ վճարողների վարքագծային ուսումնասիրության հիման վրա մշակվել են հարկային վարչարարության կատարելագործման նոր մոտեցումներ՝ ուղղված հարկային պարտքերի ծավալների կրճատմանը, հարկման բազաների գնահատմանն ու հարկ վճարողների հաշվառմանը, մասնավորապես՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի գրանցման ընթացակարգերի պարզեցմանը:

4. ՀՀ հարկային համակարգի ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների բարելավման նպատակով մշակվել են մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումներ և հարկային մարմնի աշխատողների մոտիվացիայի ու կարիերային առաջխաղացման արդյունավետ կառուցակարգեր:

**Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:**

Հետազոտության տեսամեթոդական դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից հարկային վարչարարության և քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումների, ծրագրերի համալիր մշակման, վերջիններիս իրականացման ընթացքում հետևողական վերահսկողության գործընթացներում: Հետազոտությունը գործնականում նախադրյալներ է ստեղծում ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման, հարկային արտոնությունների ոլորտում առկա խնդիրների լուծման, հարկային պարտքերի կրճատման, վարձակալության պայմանագրի հայտարարագրման համակարգի պարզեցմանն ուղղված հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանում: Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:

**Հետազոտության կառուցվածքը և ծավալը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակն ու խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորոյթները, տեսական և գործնական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝ «Հարկային համակարգի դերն ու նշանակությունը տնտեսական հարաբերությունների զարգացման գործում»,** գլխում ուսումնասիրվել է հարկային համակարգի էությունը, հարկերի գործառույթները, հարկման նպատակները, հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում, ինչպես նաև ուսումնասիրվել է հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձը:

Յուրաքանչյուր պետություն իր բնականոն գործունեությունն ապահովելու, վերջինիս վերապահված գործառույթները պատշաճ իրականացնելու, պետության և հասարակության առջև ծառայած խնդիրները լուծելու համար պետք է տիրապետի որոշակի ֆինանսական միջոցների, որոնք տարբեր հասարակարգերում հավաքագրվել են տարբեր եղանակներով և մեթոդներով: Այդ միջոցների հավաքման հիմնական աղբյուրը բոլոր ժամանակաշրջաններում եղել են և մնում են հարկերը: Դրանք ձևավորում են պետության ֆինանսական ռեսուրսները և նպաստում են տնտեսական, սոցիալական քաղաքականության իրականացմանը: Այդ իսկ պատճառով միանշանակ է այն պնդումը, որ առանց հարկերի և կայուն հարկային համակարգի չի կարող գոյատևել ոչ մի պետություն: Այսինքն՝ կարող ենք փաստել, որ հարկերը հանդիսանում են պետության ինքնիշխանության դրսևորման և պետական մարմինների կողմից իրենց գործառույթների իրականացման կարևորագույն երաշխիք:

Հարկային համակարգը ներկայացնում է հարկերի այն ամբողջությունը, որոնք սահմանվում են օրենսդրությամբ, պետական մարմինների կողմից և կոչված է ապահովելու պետության ֆինանսական ռեսուրսների ձևավորման գործընթացը: Այլ կերպ ասած՝ հարկային համակարգն իրականացնում է հարկերի սահմանման ու ներդրման, հարկային պարտավորությունների ծագման ու կատարման, հարկային հսկողության կազմակերպման, հարկային իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման ու համակարգին առնչվող այլ գործողությունների կատարման, հետևաբար նաև տնտեսության պետական կարգավորման կարևորագույն գործառույթներ:

Հարկերը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ու տարբեր երկրներում տարբեր գործառույթներ են իրականացրել: Ընդհանուր առմամբ, հարկերն իրականացնում են ֆիսկալ, կարգավորող, խթանող, հակախթանող, վերարտադրողական, սոցիալական, բաշխող, վերահսկողական գործառույթներ: Առանց հարկային համակարգի անհնարին կդառնա պետական մի շարք հիմնարար խնդիրների լուծումը, քանի որ վերը թվարկված գործառույթների միջոցով է պետությունը կարողանում ներգործել շուկայում ընթացող գործընթացների վրա և այդ

համակարգի միջոցով կազմակերպել հարկերի մուտքը պետական բյուջե՝ դրանով իսկ ապահովելով այդ բյուջեի եկամտային մասը, իսկ հարկային քաղաքականությունն էլ իր հերթին թույլ է տալիս խթանել տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացումը:

Ատենախոսությունում ուսումնասիրվել է տարբեր երկրներում գործող հարկային համակարգերի առանձնահատկությունները, դիտարկվել է անկանխիկ եղանակով գործարքների իրականացման խթանմանն ուղղված կարգավորումները՝ շեշտը դնելով այն երկրների վրա, որտեղ որպես գործիք կիրառվել է քեշբեք համակարգը, վարձակալության պայմանագրերի պետական գրանցման պարզեցմանն ու ստացված եկամուտների հարկմանն ուղղված առանձնահատկությունները, ինչպես նաև հարկային մարմինների կողմից մատուցվող ժամանակակից էլեկտրոնային ծառայությունները:

Ժամանակակից աշխարհում տնտեսության կարգավորման գործում գնալով ավելի է մեծանում պետության մասնակցության դերը: Պետությունը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում հանդիսանում է գլխավոր դերակատար, քանի որ յուրաքանչյուր պետություն ոչ միայն տնտեսվարող սուբյեկտների ստեղծման ու գործունեության իրականացման խթանողն է, այլև տնտեսական հարաբերությունների կարգավորողը: Պետությունն այդ նպատակին հասնելու համար կիրառում է մակրոտնտեսական կարգավորման հարկային գործիքները, որոնց միջոցով իրականացվող քաղաքականության միասնությունն ու ամբողջությունն էլ ապահովվում է հարկային համակարգի կողմից: Պետական եկամուտների պատմական էվոլյուցիան ցույց է տալիս, որ հարկերը կարևոր դեր են խաղացել պետությունների զարգացման գործընթացում: Հարկման հիմնական նպատակն է ավելացնել պետական եկամուտները՝ պետական ծախսերը ֆինանսավորելու համար:

Կառավարությունները իրենց քաղաքացիներից և ձեռնարկություններից գանձում են հարկեր և վճարներ, որպես եկամուտների ավելացման միջոց, և օգտագործում իրենց բյուջետային կարիքները բավարարելու համար: Այն ներառում է պետական և հասարակական նախագծերի ֆինանսավորումը, ինչպես նաև երկրում տնտեսական աճի համար բարենպաստ գործարար միջավայրի ստեղծումը<sup>1</sup>:

Ուսումնասիրելով և վերլուծելով հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում՝ կարող ենք հանգել այն եզրահանգմանը, որ առանց հարկերի պետությունները չէին կարողանա բավարարել իրենց հասարակությունների պահանջմունքները: Հարկերը շատ կարևոր են, քանի որ կառավարությունները հավաքագրում են այդ գումարները և դրանք օգտագործում են ֆինանսավորելու այն ոլորտները, որոնք կարևոր են իրենց քաղաքացիների բարեկեցության համար, ինչպիսիք են՝ անվտանգությունը, պաշտպանությունը, առողջապահությունը, տրանսպորտը, բնակարանային շինարարությունը, գիտական հետազոտությունները, շրջակա միջավայրի պաշտպանությունը, սոցիալական ապահովությունը, կրթությունը և այլն: Կառավարությունները հարկային եկամուտների մի մասը ուղղում են նաև ենթակառուցվածքների զարգացմանը, որոնք իրենց հերթին նպաստում են երկրի տնտեսական ակտիվությանը, ինչպես նաև հարկերն օգնում են

<sup>1</sup> <https://richardklein CPA.com/importance-of-taxes/>, մուսը 15.05.2022թ.

երկրում բարձրացնել կենսամակարդակը: Որքան բարձր է կենսամակարդակը, այնքան ավելի բարձր է սպառման մակարդակը: Ավելի բարձր կենսամակարդակի դեպքում կապահովվի նաև ներքին սպառման բարձր մակարդակ: Հարկերը կարևոր նշանակություն ունեն և յուրաքանչյուր քաղաքացի պետք է օգուտ քաղի այդ հարկերից: Այդ իսկ պատճառով էլ կարևոր է, որ քաղաքացիները ձգտեն վճարել հարկերը և հասկանան, որ դա ավելին է, քան պարզապես գումար վճարել կառավարությանը:

**Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ հարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները»**, գլխում բացահայտվել են ՀՀ հարկային համակարգի ձևավորման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանցից յուրաքանչյուրում առկա հիմնախնդիրները, ՀՀ-ում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի պատճառները, ինչպես նաև ուսումնասիրվել են հանրապետությունում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշները:

Հարկային համակարգի արդյունավետությունը անմիջականորեն պայմանավորված է հարկային վարչարարությամբ: Ձարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում գործնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկային համակարգը դառնում է անարդյունավետ թույլ զարգացած հարկային վարչարարության պատճառով: Չնայած վերջին տարիներին ՀՀ հարկային համակարգում կատարված բարեփոխումների՝ դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց մասին են վկայում ստվերայնության և հարկային ապառքների բարձր մակարդակները: Նման երևույթների պատճառ են հանդիսանում պետության կողմից հարկ վճարողներին պարտադրվող հարկման ոչ օպտիմալ բեռը, որը հիմնականում պայմանավորված է հարկերի հաշվարկման բարդ կամ անկատար մեխանիզմներով, հարկերի հավաքագրման գործընթացքում պետական պաշտոնյաների և հարկային տեսուչների կողմից թույլ տրվող չարաշահումները, հարկային օրենսդրության անկատարությունը, հարկային օրենսդրության անկայունությունը, որը մեծ աղեցություն ունի հարկ վճարողների որոշումների վրա, չհամակարգված հարկային արտոնությունների տրամադրումը, հարկային մարմնի աշխատակիցների մասնագիտական ոչ պատշաճ պատրաստվածությունը, տեխնիկական ոչ բավարար հագեցվածությունը:

ՀՀ հարկային վարչարարության արդյունավետությունը գնահատելու համար դիտարկվել է ընդհանուր հարկային ապառքների, այդ թվում՝ անհուսալի ապառքների, դիմնամիկան ընդհանուր հարկային եկամուտներում:



**Աղյուսակ 1. Հարկային եկամուտների գծով ընդհանուր հարկային ապառքների դինամիկան 2018-2022թթ (մլն դրամ)<sup>2</sup>**

| Հ/Հ | Ցուցանիշ/Տարի   | 2018թ     | 2019թ     | 2020թ     | 2021թ     | 2022թ     |
|-----|---|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| 1   | Ընդհանուր հարկային եկամուտներ <sup>3</sup>                                      | 1,258,100 | 1,464,300 | 1,385,200 | 1,586,900 | 1,926,000 |
| 2   | Ընդհանուր հարկային ապառքներ   | 285,843   | 278,870   | 305,610   | 313,286   | 320,921   |
| 2.1 | Հարկային ապառքների տեսակարար կշիռն ընդհանուր հարկային եկամուտներում (%)         | 22.7      | 19.0      | 22.1      | 19.7      | 16.7      |
| 3   | Անհուսալի հարկային ապառքներ   | 245,673   | 245,903   | 250,018   | 249,121   | 257,297   |
| 3.1 | Անհուսալի հարկային ապառքների տեսակարար կշիռն ընդհանուր հարկային ապառքներում (%) | 85.9      | 88.2      | 81.8      | 79.5      | 80.2      |

Ուսումնասիրելով 2018-2022 թվականներին ՀՀ-ում հարկային եկամուտների գծով ապառքների դինամիկան՝ պարզ է դարձել, որ 2022 թվականին 2018 թվականի համեմատ ընդհանուր հարկային ապառքներն աճել են 12.2%-ով, իսկ անհուսալները՝ 4.7%-ով:

Այսինքն՝ ապառքների կառավարման, դրանց առաջացման պատճառների բացահայտման և նվազման առումով ՀՀ-ում առկա են դեռևս արագ լուծում պահանջող հիմնախնդիրներ: Ուստի առաջիկա հարկային բարեփոխումների ընթացքում ապառքների նվազեցումը պետք է լինի մասնագետների ուշադրության կենտրոնում և ստանա իր համարժեք լուծումը, այլապես ՀՀ-ում հարկային համակարգի արդյունավետության գնահատականները կդառնան անիրատեսական: Միևնույն ժամանակ հարկային ապառքների առկայությունը հիմք է տալիս ենթադրել, որ առկա են բյուջետային մուտքերի ավելացման ռեզերվներ, որոնք հնարավոր կլինի օգտագործել ինչպես հարկ վճարողների վճարունակության բարելավման, այնպես էլ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման պայմաններում:

Ատենախոսությունում՝ որպես հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշ, դիտարկվել է նաև սովերային տնտեսության մակարդակը, մասնավորապես՝ ուսումնասիրվել և վերլուծվել են մի շարք երկրների և ՀՀ-ի սովերային տնտեսության մակարդակները:

Հարկային օրենսդրության անկատարությունը, արդարության սկզբունքի ոչ լիարժեք կիրառումը, հարկերի դրույքաչափերի բարձրացումը, հարկային բեռի ոչ օպտիմալ բաշխումը, հարկային ոչ արդյունավետ վարչարարությունը հանդիսանում են այն հիմնական պատճառները, որոնք նպաստում են սովերային տնտեսության մակարդակի բարձրացմանը և հարկերի վճարումից խուսափելու պրակտիկայի

<sup>2</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

<sup>3</sup> ՀՀ ՊԵԿ գործունեության տարեկան հաշվետվություն, 2020-2021թթ

տարածմանը: Տնտեսության մեջ ստվերային տնտեսության կրճատման առաջնային ցուցանիշներից է հարկային բեռը, որը ձևավորվում է հարկերի վճարման արդյունքում և սահմանվում է որպես տնտեսական սահմանափակումների աստիճան: Անհավասար բաշխված հարկային բեռի առկայությունը վկայում է անարդյունավետ հարկային համակարգի առկայության մասին, ինչը երկարաժամկետ հատվածում հանգեցնելու է բացասական տնտեսական երևույթների: Հետևաբար հարկային եկամուտների ապահովման իրականացումը, հանդիսանալով հարկային վարչարարության կարևորագույն տարր, չպետք է խոչընդոտի տնտեսության կայունացման և օպտիմալացման սկզբունքներին: Հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխմանը հնարավոր է հասնել արդյունավետ հարկային քաղաքականությամբ և հարկերի լրիվ ու ամբողջական հավաքագրմամբ, որոնք գնահատվում են հարկեր/ՀՆԱ հարաբերակցությամբ:

Ատենախոսությունում ուսումնասիրվել և վերլուծվել են մի շարք երկրների և ՀՀ-ի հարկեր/ՀՆԱ ցուցանիշները և հանգել ենք այն եզրակացությանը, որ ՀՀ-ում վերը նշված ցուցանիշն այլ երկրների համեմատությամբ բավականաչափ ցածր է և մեր կարծիքով ՀՀ-ում առկա է խնդիր, որը որոշ չափով աղճատել է այդ ցուցանիշը: ՀՀ-ում ՀՆԱ-ի կառուցվածքն ունի որոշակի առանձնահատկություններ, որն էլ իր ազդեցությունն է ունենում հարկեր/ՀՆԱ ցուցանիշի վրա: Մասնավորապես՝ վերջինիս կառուցվածքում զգալի տեսակարար կշիռ ունեն այն ոլորտները, որոնցում մեծ է ստվերային շրջանառության ծավալները: Կարող ենք փաստել նաև, որ ՀՀ-ում հարկային բեռի բաշխումը խիստ անհավասարաչափ և ոչ օպտիմալ է բաշխված և, եթե բացառենք նշված ոլորտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, ապա ակնհայտ է, որ տնտեսության մյուս ճյուղերի վրա հարկային ճնշումն ավելի մեծ է: Այսինքն՝ ՀՀ-ում խնդիրը ցածր հարկային բեռը չէ, այլ վերջինիս անհավասարաչափ բաշխումը, ինչի արդյունքում խախտվում է նաև հարկային բեռի արդարացի և հավասարաչափ բաշխման սկզբունքը, որը պայմանավորված է ոչ արդյունավետ հարկային վարչարարությամբ, հարկերի ոչ ամբողջական հավաքագրմամբ և այլն: Վերը նշվածի մասին է վկայում նաև հարկերի սահունության գործակիցը, որը ցույց է տալիս ՀՆԱ-ի միավոր փոփոխության դեպքում հարկային եկամուտների արձագանքը: Այլ կերպ ասած՝ այն իրենից ներկայացնում է ՀՆԱ-ի 1% աճին համապատասխանող հարկային եկամուտների տոկոսային աճը:

Ի լրումն վերոգրյալի՝ տնտեսության մեջ ստվերի մակարդակի դինամիկայի վերաբերյալ թվային գնահատական և մոտավոր հաշվարկ կարելի է կատարել՝ օգտվելով Համաշխարհային բանկի կողմից հրատարակված «Taxation and the Shadow Economy» խորհրդատվական հետազոտության մեթոդաբանությունից<sup>4</sup>: Համաձայն որի՝ ստվերային տնտեսության կրճատման դինամիկայի և հավաքագրվող հարկերի ծավալի միջև առկա է կոռելացիոն կապ և տնտեսության մեջ ստվերի 1 տոկոս կրճատման արդյունքում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունն աճում է 0.12%-ով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 թվականին հարկային

<sup>4</sup> Taxation and the Shadow Economy, How the Tax System Can Stimulate and Enforce the Formalization of Business Activities, World Bank 2018, p. 2-4

եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 22.7% և 2018 թվականի համեմատ համադրելի ցուցանիշներով աճել է 1.8 տոկոսային կետով<sup>5</sup>, ապա հետհաշվարկի միջոցով վերագրյալ բանաձևի համաձայն, այլ հավասար պայմաններում 2022 թվականին ՀՀ տնտեսությունում սովերը կրճատվել է մոտ 15%-ով:

Արդյունքում կարող ենք նշել, որ տնտեսությունում սովերի կրճատումը շոշափելի առաջընթաց է գրանցել, սակայն պետք է շարունակել բարեփոխումները, քանի որ սովեր առկա է նաև տնտեսական գործունեության այլ ոլորտներում: Այս նպատակով առաջարկում ենք ստեղծել անկանխիկ շրջանառության ընդլայնման մեխանիզմներ, իրականացնել ամբողջ բնակչության եկամուտների պարտադիր հայտարարագրում, ներդնել սովերից դուրս գալու համար հավելյալ խթանների համակարգ:

Այսպիսով, հաշվի առնելով վերագրյալ ուսումնասիրություններն ու վերլուծություններն, կարող ենք փաստել, որ սովերային տնտեսության դեմ պայքարն ավելի արդյունավետ կարող է իրականացվել հարկային իրատեսական պլանավորման, հարկային պարտականությունների նկատմամբ հարկ վճարողների վերաբերմունքի աստիճանի բարձրացման, հարկային մարմնի աշխատակիցների որակավորման բարձրացման, հարկային մարմնի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման, ստուգումների, տեղեկատվական արդյունավետ համակարգերի ներդրման և այլնի շնորհիվ:

**Ատենախոսության երրորդ՝ «Հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները»**, գլխում գնահատվել են հարկային վարչարարության կարողությունների գնահատման գործիքների միջոցով գնահատվել է ՀՀ հարկային վարչարարությունը, մշակվել է հարկային վարչարարության կատարելագործման նոր ուղիներ, հաշվարկվել է ՀՀ-ում ԱԱՀ-ի շեմի օպտիմալ մակարդակը և գնահատվել է վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա, մշակվել է վարձակալության պայմանագրերի կնքման և գրանցման գործընթացների պարզեցման նոր ընթացակարգեր:

ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատման, ինչպես նաև հարկային քաղաքականության կատարելագործման նպատակով հաշվարկել ենք ՀՀ-ում ԱԱՀ-ի շեմի օպտիմալ մակարդակը և գնահատել ենք վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա: ԱԱՀ-ի օպտիմալ շեմի հաշվարկման մեթոդաբանության հիմքում ընկած է «Michael Keen, Jack Mintz: The optimal threshold for a value-added tax» մոդելը<sup>6</sup>: Մեթոդաբանության համաձայն՝ պետության հիմնական խնդիրն է ընտրել ԱԱՀ-ի այնպիսի շեմ, որպեսզի ստացվի առավելագույն եկամուտ (առանց ադմինիստրատիվ ծախսերի և կշռված  $\delta$ -ով) հանելով ԱԱՀ-ի շեմի կիրառման արդյունքում բիզնես միջավայրի կորուստները, որպես ուղղակի հետևանք վճարված հարկերի և վերջիններիս հաշվառման համար կատարված ծախսերի:

Համաձայն մոդելի ԱԱՀ-ի օպտիմալ շեմը՝  $Z^* = \frac{\delta A + \Gamma}{(\delta - 1) \tau v(Y)}$ , որտեղ

<sup>5</sup> ՀՀ ՊԵԿ գործունեության տարեկան հաշվետվություն 2015-2022թթ

<sup>6</sup> [https://www.academia.edu/15265008/The\\_optimal\\_threshold\\_for\\_a\\_value-added\\_tax](https://www.academia.edu/15265008/The_optimal_threshold_for_a_value-added_tax), մուտք 12.12.2023թ.

1) Z - օպտիմալ շրջանառությունն է, որը հանդիսանում է ԱԱՀ շեմը, N - հարկ վճարողների թիվը, Y - մեկ հարկ վճարողի միջին իրացման շրջանառությունը,  $\tau$  - ԱԱՀ-ի դրույքաչափը, A - պետության կողմից մեկ հարկ վճարողի հաշվով մեկ տարվա համար կատարված ադմինիստրատիվ ծախսեր,

2) G- մեկ հարկ վճարողի կողմից մեկ տարվա ընթացքում հարկեր վճարելու համար կատարված ծախսեր: Համաձայն վերը նշված միջազգային մեթոդաբանության՝ մեկ հարկ վճարողի կողմից մեկ տարվա ընթացքում հարկեր վճարելու համար կատարված ծախսեր 3.65 անգամ գերազանցում են պետության կողմից մեկ հարկ վճարողի հաշվով մեկ տարվա համար կատարված ադմինիստրատիվ ծախսերին,

3)  $\delta$  - պետական ծախսերի սոցիալական արժեք, ընդ որում, զարգացող երկրների համար որպես սոցիալական արժեք ընդունվում է 1.3 գործակիցը,

$$4) v(Y) = \frac{\text{Ավելացված արժեք}}{\text{Վաճառքի ծավալներ}} :$$

Մոդելում ենթադրվում է, որ ԱԱՀ-ի շեմի սահմանումը չի ազդում իրացման շրջանառության վրա:

Վերոգրյալ մոդելի հիման վրա 2022 թվականի տվյալների միջոցով հաշվարկենք ՀՀ-ում ԱԱՀ-ի օպտիմալ շեմը: Նշված մոդելում պետության կողմից մեկ հարկ վճարողի հաշվով մեկ տարվա համար կատարված ադմինիստրատիվ ծախսերի հաշվարկն իրականացվում է 2022 թվականի փաստացի արդյունքներով, որի հիման վրա հիմք ընդունելով նաև միջազգային մեթոդաբանությամբ ներկայացված համամասնությունը (պետության կողմից կատարված ծախսեր և հարկ վճարողի կողմից հարկեր վճարելու համար կատարված ծախսեր (1/3.65)) հաշվարկվում է մեկ հարկ վճարողի կողմից մեկ տարվա ընթացքում հարկեր վճարելու համար կատարված ծախսերը: 2022 թվականի պետական բյուջեով հարկային մարմնին հատկացված ընթացիկ ծախսերը կազմել են 25,433,094,328 դրամ<sup>7</sup>: 2022 թվականի դրությամբ ՀՀ-ում գործող ակտիվ հարկ վճարողների քանակը կազմում է շուրջ 100 000: Հետևաբար պետության կողմից 1 հարկ վճարողի հաշվով 1 տարվա համար կատարված ծախսերը (ադմինիստրատիվ ծախսերը) կկազմեն 25,433,094,328/100,000=254,331 դրամ: Կիրառելով վերը նշված համամասնությունը (1/3.65) կստանանք 1 հարկ վճարողի կողմից 1 տարվա ընթացքում հարկերի վճարման համար կատարված ծախսերը՝ 254,331\*3.65= 928,308 դրամ:

Նշված մոդելում, բացի վերը նշված ցուցանիշներից անհրաժեշտ է հաշվարկել 2022 թվականի դրությամբ  $\frac{\text{Ավելացված արժեք}}{\text{Վաճառքի ծավալներ}}$  հարաբերակցությունը: Այդ նպատակով որպես իրացման շրջանառություն հիմք են ընդունվել ԱԱՀ-ի, շրջանառության հարկի հաշվարկներ ներկայացրած և միկրոձեռնարկատիրության հարկման համակարգով աշխատող հարկ վճարողների 2022 թվականի իրացման շրջանառությունների հանրագումարը: 2022 թվականի արդյունքներով իրացման շրջանառությունը կազմել է 14,349,601,000,000 դրամ: 2022 թվականի համար որպես ավելացված արժեքի ցուցանիշ ընդունվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից արտադրական

<sup>7</sup> <https://src.am/am/getMenusContents/256>, մուտք 12.12.2023թ.

եղանակով որոշվող ավելացված արժեքի մեծությունը՝ 7,618,544,000,000 դրամ: Հետևաբար՝ 2022 թվականի ավելացված արժեք/իրացման շրջանառություն հարաբերակցությունը կկազմի 0.531 կամ 53.1%: Կիրառելով նշված արդյունքը կստանանք՝  $Z^* = \frac{1.3 * 254,331 + 928,308}{(1.3 - 1) * 20\% + 53,1\%} = 39,514,699$ : Այսինքն՝ 2022 թվականին ՀՀ-ում ԱԱՀ-ի օպորիմալ շեմը պետք է կազմեր 39,514,699 դրամ:

Ատենախոսությունում գնահատվել է նաև ԱԱՀ-ի շեմի նվազման (115,0 մլն դրամից 39,5 մլն դրամ) ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա, որի արդյունքում, եթե ԱԱՀ-ի շեմը 115 մլն դրամից նվազեցնենք մինչև 39,5 մլն դրամ, ապա ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցությունը կկազմի շուրջ 1,8 մլրդ դրամ:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալ գնահատումը և վերլուծությունը՝ առաջարկում ենք ՀՀ հարկային համակարգում վերանայել ԱԱՀ-ի շեմը՝ 115 մլն դրամից նվազեցնելով 39,5 մլն դրամի, որը հանդիսանում է այն օպորիմալ շեմը, որը 2022 թվականի համար պետք է սահմանվեր պետության կողմից:

Հարկային քաղաքականության կատարելագործման նպատակով անհրաժեշտ է վերլուծել նաև օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունների արդյունավետությունը, քանի որ որոշ դեպքերում հարկային արտոնությունները կարող են հանգեցնել հարկային պլանավորման սխեմաների, իսկ արդյունքում՝ հարկային եկամուտների չարդարացված կորստի:

Անկախ տրամադրված հարկային արտոնության տեսակից, անհրաժեշտ է գնահատել դրա արդյունավետության մակարդակը բյուջեի հարկային եկամուտների մասով կրած կորստի հետ, իսկ սահմանված արտոնությունները չպետք է լինեն անժամկետ: Տեստական արդյունավետության տեսանկյունից օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ արտոնություններ պետք է ճշգրիտ գնահատվեն, որոնց հիման վրա էլ անհրաժեշտ է վերանայել տրամադրվող արտոնությունները՝ հարկման բազայի ընդլայնման ու ամրապնդման քաղաքականություն իրականացնելու համար: Այն թույլ կտա աստիճանաբար բարելավել հարկեր/ՀՆԱ ցուցանիշը և ամրապնդել հարկման հորիզոնական արդարության սկզբունքը: Այսինքն՝ կարող ենք նշել, որ հարկային արտոնությունները պետք է սահմանվեն միայն պետության ռազմավարական կարևորություն ունեցող ճյուղերի զարգացման կամ տնտեսական ճգնաժամերի ազդեցությունները մեղմելու նպատակներով և առանձին օրենքներով:

Հարկային արտոնությունների համեմատության համար ատենախոսությունում ուսումնասիրվել և վերլուծվել է մի շարք երկրների հարկային ծախսերի (հարկային արտոնությունների) տեսակարար կշիռները ՀՆԱ-ում և հարկային եկամուտներում: 2020 թվականին ՀՀ-ում հարկային ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 7.4%, որը մոտ 2.7 տոկոսային կետով բարձր է ՏՀԶԿ և G20 երկրների միջին ցուցանիշներից, ԵՄ երկրների միջին ցուցանիշի հետ համեմատած բարձր է մոտ 3.0 տոկոսային կետով, իսկ հարևան երկրների հետ համեմատած գրեթե բարձր է 2-3 տոկոսային կետով: Ընդ որում՝ ՀՀ-ում 2020 թվականին 2017 թվականի հետ համեմատած հարկային ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աճել է 0.85, իսկ նախորդ տարվա հետ համեմատած՝ 0.67 տոկոսային կետերով:

Միաժամանակ, ՀՀ-ում հարկային ծախսերի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում 2020 թվականին կազմել է 33.34%, որը համապատասխանաբար 6.46 և 6.85 տոկոսային կետով բարձր է G20 երկրների և ՏՀԶԿ միջին ցուցանիշներից, ԵՄ երկրների միջին ցուցանիշի հետ համեմատած բարձր է 9.39 տոկոսային կետով, իսկ հարևան երկրներից Վրաստանի հետ համեմատած բարձր է 9.1 տոկոսային կետով: ՀՀ-ում 2020 թվականին 2017 թվականի հետ համեմատած հարկային ծախսերի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում աճել է 1.83, իսկ նախորդ տարվա հետ համեմատած՝ 3.01 տոկոսային կետերով:

Հավելվածի աղյուսակի 1-ինի տվյալներից ակնհայտ է դառնում, որ 2023 թվականի համար հարկային արտոնությունները գնահատվել են շուրջ 584,763 մլն դրամ, որը կազմում է 2023 թվականի համար գնահատված ՀՆԱ-ի 6.27%-ը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2023 թվականի հարկային արտոնության չափը 81,461 մլն դրամով կամ 16.2%-ով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը:

Ընդհանուր հարկային արտոնություններում հարկատեսակներից ամենամեծը բաժին է ընկնում ԱԱՀ-ին, որը 2023 թվականի համար գնահատվել են 409 934 մլն դրամ կամ հարկային եկամուտների 18.6%-ը: Այս հարկատեսակի գծով հարկային արտոնությունը 2023 թվականին գնահատվել է ՀՆԱ-ի 4.4%-ը՝ 2020 թվականի համանման ցուցանիշի հետ համեմատած նվազելով 1.27 տոկոսային կետով: ԱԱՀ-ի գծով հարկային արտոնությունների կազմում առավել մեծ կշիռ ունեն առողջապահական, կրթական, ֆինանսական, ինչպես նաև խաղային գործունեության ոլորտներում ծառայությունների ազատումը ԱԱՀ-ից: Միջազգային պրակտիկայում կրթության և առողջապահության ոլորտում ծառայությունները հիմնականում ազատված են ԱԱՀ-ից: Այդ իսկ պատճառով հնարավոր չենք համարում ԱԱՀ-ի գծով հարկային արտոնության ամբողջական վերանայումը, սակայն *առանձին բժշկական ծառայությունների գծով (օրինակ՝ էսթետիկ նշանակության ծառայություններ) առաջարկում ենք ԱԱՀ-ի արտոնությունը հանել*, քանի որ տվյալ ոլորտում գնալով աճում են ծառայություն մատուցող տնտեսվարող սուբյեկտների թվաքանակը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների տեսակները և սակագները, ուստի կարծում ենք պետք է ընդլայնել ԱԱՀ-ի գծով հարկման բազան, որի արդյունքում կավելանան նաև հարկային եկամուտները:

Չնայած մի շարք օրենսդրական փոփոխությունների՝ դեռևս ՀՀ-ում շարունակվում է զարգանալ խաղային գործունեությունը և այդ ոլորտին ԱԱՀ-ի գծով արտոնություն տրամադրելը կարծում ենք, որ անարդյունավետ է ու ոչ արդարացի: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք վերանայել խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում իրականացնող հարկ վճարողներին տրամադրվող հարկային արտոնությունը և վերջիններիս ևս հարկել ԱԱՀ-ով:

Շահութահարկի գծով հարկային արտոնությունները 2023 թվականին գնահատվել են 81464 մլն դրամ, որը 3.2%-ով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Այս հարկատեսակի գծով հարկային ծախսը կազմել է հարկային եկամուտների 3.7%-ը կամ ՀՆԱ-ի 0.87%-ը՝ 2021 թվականի հետ համեմատած նվազել է 0.25 տոկոսային կետով: Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել

են 93 365 մլն դրամ, որը 52.9%-ով ավելին է, քան 2022 թվականի գնահատականը: Սակայն երբ համեմատում ենք 2020 թվականի տվյալների հետ, ակնհայտ է դառնում, որ այս հարկատեսակի գծով հարկային ծախսերը աճել են շուրջ հինգապատիկ անգամ, իսկ հարկային եկամուտներում տեսակարար կշիռն՝ 3.1 տոկոսային կետով, որը հիմնականում պայմանավորված է հիպոթեքային վարկերի տոկոսների սպասարկման համար վերադարձված եկամտային հարկի և SS ոլորտի արտոնությունների մեծության աճերով:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ հարկային բազայի ընդլայնման, հարկային համակարգի արդարության և արդյունավետության բարձրացման համար հարկային ծախսերն առանցքային նշանակություն ունեն: Գնահատված ընդհանուր հարկային ծախսերը 2023 թվականին կազմել են ՀՆԱ-ի մոտ 6.27%-ը, որից 4.4 տոկոսային կետը բաժին է ընկնում միայն ԱԱՀ-ին: Արտոնյալ ռեժիմների, հարկերից ազատումների և խթանների պարզեցումը էական նշանակություն ունեն հարկերի հարաբերակցությունը բարձրացնելու համար: Որոշ հարկային ծախսեր, եկամտային հարկից հիփոթեքային վարկի տոկոսագումարների վերադարձը, SS ոլորտին տրամադրվող հարկային արտոնությունները, և ԱԱՀ-ի ծախսերը, նույնպես ռեգրեսիվ ազդեցություն ունեն և դրանց նվազեցումը կբարելավի հարկային համակարգի արդյունավետությունը:

**Առեւտրային «Եզրակացություններ» բաժնում** ամփոփված են հետազոտության հետևյալ հիմնական եզրահանգումները ու առաջարկությունները.

1. Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և գործող հարկային համակարգի արդիականացման ու կատարելագործման նպատակով առաջարկվել է կրճատել հարկային պարտքերի/ապառքների ծավալները, մշակել հարկ վճարողների պարտքերի կառավարման ծրագրային ապահովման գործիքակազմ և հետագայում զարգացնել դրանց կանխարգելման արդյունավետ համակարգ: Մասնավորապես՝

❖ առաջարկում ենք մշակել հարկային ապառքների կառավարման ռազմավարություն, որը պետք է հիմնված լինի հարկային պարտքի առաջացումը կանխարգելող միջոցառումների դիտարկման, հարկ վճարողների հետ վաղաժամ և շարունակական համագործակցությունից մինչև հարկադիր կատարման միջոցառումների իրականացման, արդյունավետ ու համաչափ միջոցների կիրարկման և պարտքերի դուրսգրման սկզբունքների վրա,

❖ առաջարկում ենք իրականացնել հարկ վճարողների վարքագծային հետազոտություն, պարզել հարկային պարտավորությունների չկատարման պատճառները, ունենալ հարկ վճարողների իրազեկվածության տարեկան պլան՝ բարձրացնելով հարկ վճարողների իրազեկվածությունը, որի արդյունքում կբարելավվի նաև հարկային պարտավորությունների կատարման մակարդակը,

❖ հարկային մարմնի աշխատողները պետք է բանակցեն հարկային պարտավորությունները չկատարած հարկ վճարողների հետ՝ նախքան հարկադիր գանձման նպատակով տվյալների տրամադրումը Հարկադիր կատարման ծառայությանը:

2. Առաջարկում ենք բարելավել հարկային համակարգի ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները: Արդյունավետ հարկային վարչարարության

իրականացման համար անհրաժեշտ է ունենալ մարդկային ռեսուրսների կառավարման մի համակարգ, որը կիրականացնի հարկային մարմնի առջև դրված խնդիրների և նպատակների իրագործումը: Հարկային մարմնի աշխատողները պետք է ունենան անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ գործառնությունների արդյունավետությունն ապահովելու և ծառայությունների որակը բարձրացնելու համար: Այս նպատակներին հասնելու համար առաջարկում ենք՝

❖ մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգ և բարելավել աշխատողների վարձատրության գործիքակազմը: Հարկային մարմինն առաջիկա տարիների բարեփոխումների հիմքում դրված նպատակների իրագործման համար կարիք ունի որակյալ անձնակազմի, ինչը կօգնի բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակը, գոհունակությունը, իսկ վերջիններս էլ կհանգեցնեն հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը: Խնդրո առարկա հանդիսացող հարցերի լուծման նպատակով առաջարկում ենք հարկային մարմինը համալրել արհեստավարժ և հմուտ կադրերով, կիրառել աշխատանքի վարձատրության բարձրացման աստիճանական համակարգ՝ հիմք ընդունելով կատարված աշխատանքի արդյունքը,

❖ մշակել և ներդնել հարկային մարմնի աշխատողների մոտիվացիայի և կարիերային առաջխաղացման արդյունավետ ու ժամանակակից կառուցակարգեր՝ իրականացնելով հարկային ծառայողների նորանշանակ, երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող աշխատողների վերապատրաստման ծրագրեր: Արդյունքում բարձր գնահատական ստացած աշխատակիցներին՝ որպես մոտիվացիայի միջոց, արտահերթ բարձրացնել աշխատավարձը՝ վարձատրելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված տվյալ պաշտոնի և աշխատանքային ստաժից կախված այդ աշխատողի համար նախատեսված վարձատրության սանդղակին համապատասխանող գործակցի մեկ մակարդակ բարձր գործակցով:

3. Կանխիկի օգտագործումը ՀՀ-ում դեռևս մնում է արդիական հիմնախնդիր, որը հանդիսանում է հարկերից խուսափելու հիմնական միջոցներից մեկը: Նշված խնդիրը լուծելու համար առաջարկում ենք խթանել անկանխիկ եղանակով գործաքների իրականացումը և կրճատել կանխիկի շրջանառության ծավալները: Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է մշակել կանխիկ դրամի կրճատմանն ուղղված միջոցառումների համապարփակ փաթեթ: Մասնավորապես՝

❖ առաջարկում ենք որպես փոխհատուցման միջոց ներդնել «բեշբեք» (Cashback) համակարգը: Անկանխիկ եղանակով գործարքների իրականացման դեպքում գնորդներին տրամադրել որոշակի չափով գումարի հետվերադարձ, որի արդյունքում նրանք կստիպեն վաճառողներին գործարքն իրականացնել անկանխիկ եղանակով՝ POS-տերմինալների միջոցով,

❖ հաշվի առնելով ՀՀ բնակչության սոցիալական վիճակը, ինչպես նաև ակնկալվող մեծ ծավալի փոխհատուցվող գումարի չափը և հիմք ընդունելով կենսաթոշակային տարիքի քաղաքացիների շրջանում ներկայումս կիրառվող



կենսաթոշակային քարտերով անկանխիկ վճարումների «քեշբեք» համակարգի հաջողված փորձը՝ առաջարկում ենք «քեշբեք» համակարգը կիրառելիս փոխհատուցվող գումարի նկատմամբ սահմանել վերին շեմ: Մինևույն ժամանակ հաշվի առնելով, որ այս համակարգի ներդրման նպատակը անկանխիկ եղանակով գործարքների իրականացման խթանումն է, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտների իրացման շրջանառությունը, հետևաբար նաև հարկային եկամուտները կավելանան, առաջարկում ենք փոխհատուցումն առաջիկա 3 տարիների ընթացքում իրականացնել պետության, իսկ այնուհետև՝ առևտրային բանկերի կողմից:

4. Չնայած ՀՀ-ում անշարժ գույքի վարձակալությանն առնչվող իրավահարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, սակայն անշարժ գույքը վարձակալության հանձնելու արդյունքում ստացված եկամուտները չհայտարարագրելու դեպքերը բավականին շատ են՝ խախտելով հարկային համակարգի համապարտադիրության սկզբունքը: Խնդրո առարկա հանդիսացող հարցերի լուծման, ինչպես նաև հարկային համակարգում առավել արդյունավետ մեխանիզմներ ներդնելու նպատակով՝ առաջարկում ենք փոփոխություններ իրականացնել հետևյալ 3 ուղղություններով՝

1) Պարզեցնել վարձակալության պայմանագրի հայտարարագրման համակարգը.

❖ ստեղծել նոր հավելված, այդ թվում՝ բջջային, վարձատուի համար գրանցումը հեշտացնելու նպատակով: Առկա տեղեկատվության հիման վրա հարկային մարմինը կկարողանա ինքնաշխատ կերպով լրացնել հարկային հաշվարկը:

❖ որպես այլընտրանքային տարբերակ՝ կիրառել արտոնագրի (հավաստագրի) հիման վրա հարկի գանձման մեխանիզմը,

❖ անշարժ գույքը վարձակալության հանձնելուց ստացված եկամուտը դիտարկել որպես ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտ: Այս դեպքում վարձատուն հնարավորություն կունենա կատարել համախառն եկամտից որոշակի նվազեցումներ և արդեն իսկ հարկել զուտ եկամուտը,

2) սահմանել որոշակի արտոնություններ գույքը վարձակալությամբ հանձնողների՝ վարձատուների և վարձակալների համար.

❖ տրամադրել վճարված եկամտային հարկի չափով անշարժ գույքի հարկի նվազեցում կամ հետվերադարձ վարձատուին, ընդունել գոտիականության սկզբունքը, եթե գույքը գտնվում է մարզերում, ապա այդ դեպքում ամսական 10% հարկի դրույքաչափը նվազեցնել մինչև 5%-ի չափով, իսկ սահմանամերձ տարածքներում վարձատուներին ազատել հարկերից,

3) պետության կողմից փոխհատուցել վարձակալին առաջին 2 ամսվա կոմունալ վճարումների որոշակի մասը կամ որպես կանխավճար՝ փոխանցել միանվագ գումար, կիրառել պատասխանատվության խիստ միջոցներ. վարձակալությունից ստացված եկամուտները չհայտարարագրելը հավասարեցնել ապօրինի ձեռնարկատիրական գործունեությանը կամ ապրանքների անփաստաթուղթ մատակարարմանը՝ կիրառելով այդ խախտումների համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցները:

5. Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք վերանայել ԱԱՀ-ի շեմը: Հետազոտությունում միջազգային պրակտիկայում կիրառվող «Michael Keen, Jack Mintz: The optimal threshold for a value-added tax» մոդելի հիման վրա հաշվարկվել է 2022 թվականի համար ՀՀ հարկային համակարգում ԱԱՀ-ի օպտիմալ շեմը: Արդյունքում ԱԱՀ-ի օպտիմալ շեմը կազմել է 39.5 մլն դրամ, որը հանդիսանում է այն օպտիմալ շեմը, որը 2022 թվականի համար պետք է սահմանվեր պետության կողմից: 2022 թվականի համար գնահատվել է նաև ԱԱՀ-ի օպտիմալ շեմի ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա, որը կազմել է շուրջ 1,8 մլրդ դրամ:

6. Հարկային համակարգում գործող բազմաթիվ հարկային արտոնությունների տրամադրման խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, ինչպես նաև հարկային արտոնություններից ստացվող միջոցների կարգավորման այլ գործիքներ, որոնք կնպաստեն դրանց արդյունավետ և նպատակային օգտագործմանը: Որպես այդպիսին կարող է հանդես գալ այդ միջոցների օգտագործման մշտադիտարկումը, որի միջոցով հնարավոր կլինի վերահսկել հարկային արտոնությունների տրամադրման արդյունավետությունը: Այդ տեսանկյունից անհրաժեշտ է՝

- ❖ մշակել և ներդնել հարկային արտոնությունների գնահատման ընդհանուր մեթոդաբանություն, որի միջոցով հնարավոր կլինի նույն մոտեցմամբ գնահատել հարկային արտոնությունների տրամադրման տեսակը, չափը և ժամկետները,

- ❖ ներդրումային ուղղվածության հարկային արտոնությունները պետք է գնահատել ներդրումային արդյունավետության տեսանկյունից, որը հետագայում պետք է ենթադրի հարկային մուտքերի ավելացում:

## **Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Մովսիսյան Ք., «Հարկերի էությունը և գործառույթները», «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ. որոնումներ, հեռանկարներ, լուծումներ» գիտական հոդվածների ժողովածու 1 (5), Գ. Վ. Պլեխանովի անվ. ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., Երևան, 2021, էջ 287-295:

2. Մովսիսյան Ք., «Հարկային համակարգի ձևավորման առանձնահատկությունները», «Այլընտրանք» գիտական հանդես, Տնտեսագիտություն, գործարարություն, կառավարում, 15 տարի գիտության առաջնագծում, N 4, Երևան, 2021, էջ 124-132:

3. Մովսիսյան Ք., «Արտասահմանյան երկրներում գյուղատնտեսության ոլորտի հարկային համակարգերի առանձնահատկությունները», «Սոցիալ-տնտեսական

զարգացման հիմնախնդիրներ. որոնումներ, հեռանկարներ, լուծումներ» գիտական հոդվածների ժողովածու 1 (7), Գ. Վ. Պլեխանովի անվ. ՌՏՀ Երևանի մասնաճյուղ, «ԻՆՖՈՎՈՂԻ» ՍՊԸ հրատ, Երևան, 2022, էջ 146-155:

4. Bostanjyan V., Movsisyan K., “The Role of the Tax System in the State Regulation of the Economy”, “Alternative” Quarterly Academic Journal, Economy&Management, N3, Yerevan, 2022, p. 142-146:

5. Մովսիսյան Բ., «ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ և իրավական կարգավորումները», «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ. որոնումներ, հեռանկարներ, լուծումներ» գիտական հոդվածների ժողովածու 2 (9), Գ. Վ. Պլեխանովի անվ. ՌՏՀ Երևանի մասնաճյուղ, «ԻՆՖՈՎՈՂԻ» ՍՊԸ հրատ., Երևան, 2023, էջ 202-213:

6. Movsisyan K., «Legislative and Legal Support of the Tax System of the Republic of Armenia», «Alternative» Quarterly Academic Journal, Economy&Management, N4, Yerevan 2023, p. 58-63:

**KNKUSH HOVIK MOYSISYAN**  
**ACTUAL PROBLEMS OF INCREASING THE EFFICIENCY OF THE TAX SYSTEM**  
**OF THE REPUBLIC OF ARMENIA**

Abstract of the dissertation for the pursuing of scientific degree of a PhD in Economics for the specialty 08.00.03 –“Finance, accounting”. The defense of the dissertation will take place on August 29, 2024 at 14:00 at the meeting of the professional council 014 of Higher Education and Science Committee operating at the Armenia State University of Economics.

Address: 128 Nalbandyan St., 0025, Yerevan, Armenia.

**ABSTRACT**

**Relevance of the research topic.** Emphasizing the reforms aimed at the development of the tax system of the Republic of Armenia (RA), however, it is necessary to note that there are currently unsolved problems in that system, which are related to the simplification of tax policy and the improvement of administration. The role of tax administration is obviously key in solving the mentioned problems and realizing the goals facing the republic. The improvement of the latter largely depends on the provision of state revenues and the formation of the financial base necessary for the implementation of the functions of the state. At the same time, the improvement of tax administration is directly related to the current tax policy, which requires considering the reforms implemented in this area as a unified process.

In order to improve tax policy and increase the efficiency of the tax system in the RA, the dissertation raised and resolved issues aimed at ensuring clarity of tax legislation, reviewing the types of taxes in force in the RA, their tax bases and rates, reducing the volume of the shadow economy, stimulating non-cash transactions, simplifying the state registration of lease agreements, providing tax benefits, the expansion of electronic services provided by the tax authority, the replenishment of qualified and knowledgeable human

resources and the solution of other problems, which determines the choice of the topic, the relevance and significance of the study.

**The purpose and objectives of the study.** The main purpose of the dissertation is to develop measures and proposals aimed at the development of the tax system of the RA, to achieve which the following tasks were set and solved in the work:

❖ to study the functions of taxes and the role of the tax system in state regulation of the economy, international experience in the functioning of tax systems, to reveal the features of the stages of formation of the tax system of the RA, the reasons for the low level of the ratio of tax revenues to GDP in the RA,

❖ to study the indicators for evaluating the effectiveness of tax administration carried out in the republic, and to evaluate the tools for assessing the possibilities of tax administration, to develop new ways to improve tax administration,

❖ to calculate the optimal level of the VAT threshold in RA and assess its impact on the revenues of the RA state budget, develop new procedures for simplifying the processes of signing and registering lease agreements.

**The main results and scientific novelty of the research.** The main results and scientific novelty of the research relate to the nomination of new and applicable ways aimed at improving the efficiency of the tax system of the RA, which we present below.

1. Using the methods used in international practice, the effectiveness of the tax system of the RA was assessed and proposals were developed to revise the types of taxes in force in the RA, their tax bases and thresholds.

2. Methodological approaches for providing and evaluating tax benefits were developed, a methodology for evaluating and monitoring the degree of justification of benefits was proposed.

3. Based on the behavioral study of taxpayers, new approaches to improving tax administration were developed, aimed at reducing tax debts, assessing tax bases and registering taxpayers, in particular, simplifying the procedures for registering real estate lease contracts.

4. In order to improve the institutional and human capabilities of the RA tax system, new approaches to human resource management and effective mechanisms for motivating and career development of tax officials have been developed.

## **КНКУШ ОВИКОВНА МОВСИСЯН АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ НАЛОГОВОЙ СИСТЕМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 «Финансы, бухгалтерский учет». Защита диссертации состоится в 29 августа 2024 года в 14:00, на заседании профессионального совета 014 Комитета по высшему образованию и науке, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу, Армения, 0025, г. Ереван, ул. Налбандяна, 128.

## АННОТАЦИЯ

**Актуальность темы исследования.** Подчеркивая важность реформ, направленных на развитие налоговой системы РА, тем не менее, необходимо отметить, что в настоящее время в этой системе существуют нерешенные проблемы, связанные с упрощением налоговой политики и совершенствованием администрирования. Очевидно, что роль налогового администрирования в решении указанных проблем и реализации целей, стоящих перед Республикой, является ключевой. Совершенствованием последнего во многом обусловлено обеспечение государственных доходов и формирование финансовой базы, необходимой для выполнения функций государства: В то же время совершенствование налогового администрирования напрямую связано с проводимой налоговой политикой, что требует рассматривать реформы, проводимые в этой сфере, как единый процесс.

С целью совершенствования налоговой политики и повышения эффективности налоговой системы в Армении в диссертации были поставлены и решены вопросы, направленные на обеспечение ясности налогового законодательства, пересмотр видов налогов, действующих в Армении, их налоговых баз и ставок, сокращение объемов теневой экономики, стимулирование безналичных операций, упрощение государственной регистрации договоров аренды, предоставление налоговых льгот, расширение электронных услуг, предоставляемых налоговым органом, квалифицированный и знающий кадровый состав и решение других проблем, что обуславливает выбор темы, актуальность и значимость исследования.

**Цель и задачи исследования.** Основной целью диссертации является разработка мер и предложений, направленных на развитие налоговой системы РА, для достижения которых в работе были поставлены и решены следующие задачи.

- ❖ изучить функции налогов и роль налоговой системы в государственном регулировании экономики, международный опыт функционирования налоговых систем, выявить особенности этапов формирования налоговой системы РА, а также Причины низкого уровня соотношения налоговых доходов к ВВП в РА,

- ❖ изучить показатели оценки эффективности налогового администрирования, осуществляемого в республике, оценить инструменты оценки возможностей налогового администрирования, разработать новые способы совершенствования налогового администрирования,

- ❖ рассчитать оптимальный уровень порога НДС в РА и оценить его влияние на доходы государственного бюджета РА,

- ❖ разработать новые процедуры для упрощения процессов заключения договоров аренды и регистрации.

Основные результаты исследования и научная новизна. Основные научные результаты и новизна исследования касаются выдвижения новых и применимых путей, направленных на повышение эффективности налоговой системы Армении, которые мы представляем ниже.

1. С помощью методов, применяемых в международной практике, была оценена эффективность налоговой системы РА и разработаны предложения по пересмотру видов налогов, действующих в РА, их налоговых баз и пороговых значений.

2. Разработаны методические подходы к предоставлению и оценке налоговых льгот, предложена методика оценки и контроля степени обоснованности льгот.

3. На основе поведенческого исследования налогоплательщиков разработаны новые подходы к совершенствованию налогового администрирования, направленные на сокращение налоговой задолженности, оценку налоговой базы и регистрацию налогоплательщиков, в частности, упрощение процедур регистрации договоров аренды недвижимого имущества.

4. С целью улучшения институциональных и человеческих возможностей налоговой системы РА были разработаны новые подходы к управлению человеческими ресурсами и эффективные механизмы мотивации и карьерного роста сотрудников налоговых органов.

